ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Տուն դառնալու լուր ունեմ ձեզ, ի՛մ եղբայրներ հայրենաբաղձ,
Մեր հնավուրց կաղնուց պոկված դուք տերևներ դեռ ցանուցիր,
Որ թափառում եք դարեդար ձեր տրամաշուք սրտում պահած,—
Պատկերն հայոց հայրենիքի, որպես երազ մի լուսածիր։

Գիտեմ հեռվում, օտար երկրի ոչ մի արև ձեզ չժպտաց
Եվ հողն օտար ձեր կարոտի, ձեր տրամության լացով է թաց.
Թողե՛ք հեռու աշխարհներին որբությունը անտուն մարդու,
Եկե՛ք, խոնջած ի՛մ անտուններ, հայրենի տան դռներն են բաց։

Եկե՛ք ծաղկուն օրրանը ձեր, որ կյանք առել մոխիրներից
Ու դալարում է երփնավառ, որպես չքնաղ եդեմ այգի,
Ուր հնչում է սրտապարար հայկալեզու երգն անթախիծ,
Եվ ուր տերն են և ինքնիշխան կտրիճ թոռները մեր Հայկի։

Եկե՛ք, սիրով կանչում են ձեզ մեր պապական արտն ու արոր,
Կանչում են ձեզ մեր սարերի անուշ հովերն մեղմօրոր,
Մեր աղբյուրները լուսաշիթ, մեր օջախները հուրհրան
Եվ մանուկները դալարուն, որպես գարնան արտուտ ու լոր։

Մեծ մեծագործ Առաջնորդի ձեռքն է կանչում ձեզ հայրաբար,
Առաջնորդի, որ մեզ տվեց և՛ հայրենիք, և՛ ինքնություն,
Ձեզ էլ կտա նա շեն օջախ, կտա ոգի ստեղծարար։
Եկե՛ք, չքնաղ մեր աշխարհի Առաջնորդն է ձեզ կանչում տուն։

ԱՂԱՎՆԻ

(«Սովետ. Հայաս.», դեկտ. 14, 1945 թ.)